ուեց Վեհափառ Հայրապետին առանձին խօսակցութեամբ մի քառորդ ժամու չափ։

Նորին Մեծութեան Թիֆլիզից դուրս գնալից յետոյ 1ին Հոկտ. Վեհափառ Հայրապետն տուեց ոմանց փոխ այցելութիւն, իսկ այլոց մօտ ուղարկեց իւր եպիսկոպոսներին, վճռելով մնալ Թիֆլիզում, մինչեւ որ Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրն և իւր ընտանիքը յաջողութեամբ անցնեն Կովկասը։ 2ից Հոկտեմբերի, Վեհափառ Հայրապետը զբաղեցաւ եկեղեցական և դպրոցական գործերով. այցելեց Ներսիսեան, Գայիանեան, Յովնանեան և սուրբ Նշան եկեղեցւոյ դպրոցներն, որոնց մասին արդէն հրատարակուած է «Արարատ» ամսագրում։ Նոյնպէս զբաղեցաւ կարգադրելով վիճակային անյետաձգելի գործերն և ընդունելով բազմաթիւ խնդրատուներին։

Այս միջոցին Բագուից և Գանձակից եկան պատգամաւորներ խնդրելու, որ Նորին Օծութիւնը բաղդաւորէ այդ քաղաքների հայ հասարակութեանն եւս իւր այցելութեամբ և օրհնութեամբ։

Այս բարեպատեհ և բաղդաւոր օրերումն՝ երբ Թիֆլիզը պարծենում էր երկու Վեհափառ այցելուներով՝ եկաւ և Նորին Կայսերական Բարձրութիւն, նախկին փոխարքայ Միխայէլ Նիկոլայեւիչը և բաղդաւորեց Թիֆլիզը իւր գալստեամբն։

Այդ օրը 13 էր Հոկտեմ. Վեհափառ Հայրապետը տեղեկանալով Նորին Բարձրութեան գալստեան, որոյ փոխարքայութեան ժամանակ ինքն Թիֆլիզի թեմական առաջնորդի պաշտօնն էր վարում, ցանկացաւ տեսակցել Նորին Բարձրութեան հետ։

Նորին Կայսերական Բարձրութիւնը իւր ադիւտանտի միջնորդութեամբ իմաց տուեց, որ իւր ընտանեօք կսպասէ Վեհափառին 2½ ժամին զկնի կէս աւուր երկաթուղու կայարանի արքունական սենեակներում։ Որոշեալ ժամանակը Նորին Վեհափառութիւնը ունելով հետը իբրեւ թարգման Սինոդի առանձին յանձնարարութեանց պաշտօնեայ Պ. Ռ. Մելիք—Ադամեանցին՝ գնաց տեսութեան։ Նորին Օծութեան և Մեծ Իշխանի տեսակցութիւնը մտերմական էր և սիրալիր։ Մեծ Իշխանուհի Օլգայ Ֆէօդորովնան իւր երեք զաւակներով յայտնեց անկեղծ ուրախութիւն տեսնելու Նորին Օծութեան և ստանալու նորա օրհնութիւնը։ Վեհափառը ողջունեց Նորին Բարձրութեան հետեւեալ խօսքերով —